ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ՍՈՒՍԱՆՆԱ ԱԴԱՄՅԱՆ
ՀԱԻ

ԱՆՏԻՊ ՎԻՄԱԳՐԵՐԸ ՄԵՍՐՈՊ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՍՄԲԱՏՅԱՆՑԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Փթ դարի հայ տեղագիրների հավաքչական աշխատանքների արդյունքում մեզ են հասել մի քանի հազար վիմագրեր Հայաստանից եւ հարակից երկրներից: Դրանք մեծապես կարեւորվում են յուրաքանչյուր բնակավայրի, հուշարձանի պատմության ուսումնասիրության համար:

Այդ գործընթացում իր կարեւոր առաքելությունն ունեցավ նաեւ Հայ Եկեղեցու երախտավոր, տեղագիր-ճանապարհորդ, վիմագրագետ Մեսրոպ արքեպիսկոպոս Սմբատյանցը[1] *(1833-1911), ով հավաքել է ավելի քան յոթ հարյուր վիմագրեր, որոնց մեծ մասը հետագայում հրատարակվել է: Հեղինակի արխիվային ֆոնդերից առանձնացրել ենք երկու տասնյակ վիմագրեր Հայաստանի հարակից երկրներից, որոնք առաջին անգամ են ներկայացվում գիտական հասարակությանը: Հարկ է նշել, որ նա վիմագրերը ձեռագրերում զետեղել է առանց պայմանական նշանների:*

Իր հոգեւոր գործունեության ընթացքում Մեսրոպ Սմբատյանցը եղել է Հյուսիսային Կովկասի հայկական գաղթօջախներում (Ղրիմ[2]*, Վոլգոգրադ, Նոր-Նախիջեւան*[3]*, Պյատիգորսկ), գրառել է վիմագրեր, որոնցից եր-*

---

[1] Մ. Սմբատյանցի կենսագրությունը տես Ս. Ադամյան, Մեսրոպ արքեպիսկոպոս Սմբատյանցի վիմագրագիտական գործունեությունը, Էջմիածին, 2007, ժ., էջ 103-110:

[2] Հայաստանի ազգային արխիվ, ֆոնդ 429, ցուցակ 1, Մ. Սմբատյանցի անձնական արխիվ (այսուհետ՝ ՀԱԱ), գործ 65, Երկամյա ճանապարհորդություն Էջմիածնից Ցարիցին, թերթ 18բ, 19ա:

[3] ՀԱԱ, գործ 65, թերթ 17բ: Ռուսաստանի եւ Հյուսիսային Կովկասի հայերեն արձանագ-

կուսը մեզ չեն հասել: Վոլգոգրադի (Յարիցին, Ստալինգրադ) Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու զանգակատան հարավային պատին գետեղված է շինարարական հետեւյալ արձանագրությունը.

1. Այս զանգակատունը կառուցած է այրի Անանա Դաւթեան Ալթաբէկեանցի (ի ծնէ Միասկարեանց) նուիրատուութեամբ ի յիշատակ իր հանգուցեալ Յովհանէս ամուսնոյ եւ տագրնէր Համբարձում եւ Իսահակ Ալթաբէկեանցներին 1908 ամի[4]:

Պյատիգորսկ քաղաքի Ս. Մաշտոց եկեղեցու զանգակատան պատին եղել է.

2. Զանգակատունս կառուցաւ արդեամբ Բագուաբնակ Շամախեցւոյ Միքայէլի Աւագին Նաջարեանց ի յիշատակ իւր: 1901 թ. 23 օգոստոսի[5]:

Մ. Սմբատյանցի ձեռագրերում մեկ տասնյակից ավելի վիմագրեր կան Վրաստանի Ախալցխա[6] եւ Աբասթուման[7] քաղաքներից, Կախեթի երկրամասից[8], իսկ ժողովրդագրական նյութեր նա հավաքել է Պարսկահայքի հայկական բնակավայրերից, նաեւ Թավրիզից: Ի դեպ այստեղից նա գրառել է երկու վիմագիր, որոնցից առաջինը գտնվում է քաղաքի Ս. Աստվածածին եկեղեցու պատին.

3. Շնորհիւն Ա̅Ծ̅ շինեցաւ սուրբ եկեղեցին ի Հայրապետութեան
տուն Ղազարա դերընտիր Ա̅Ծ̅արել կաթողիկոսի
ամենայն Հայոց առաջնորդութ նահանգիս....
Զաքարիա վարդապետին. արդեամբ բո....
կանաց եւ տեղականաց քաղաքիս. Թվ....[9]:

---

[4] ՀԱԱ, գործ 65, թերթ 7բ:

[5] ՀԱԱ, գործ 23, Պատմական տեղեկանք Ագուլիս գյուղաքաղաքի մասին: Էջմիածնի գրադարանի ձեռագիր մատյանների ցուցակը, թերթ 3բ:

[6] ՀԱԱ, գործ 89, ժամանակագրական տեղեկություններ՝ ձեռագիր ցուցակների, նորակառույց եկեղեցու օծման կանոնների, հին արձանագրությունների մասին, թերթ 37բ-39: Ախալցխայի արձանագրությունների մասին տես Ս. Ադամյան, Ախալցխայի նորահայտ արձանագրությունները, Տարեգիրք, պատմություն եւ հասարակագիտություն, ԵՊՄՀ, Երեւան, 2015, 1, էջ 7-17:

[7] ՀԱԱ, գործ 23, թերթ 3ա: Աբասթումանի վիմագրերը հրատարակել է Ս. Կարապետյանը: Տես **Ս. Կարապետյան**, Ախալցխա, Երեւան, 2008, էջ 27:

[8] ՀԱԱ, գործ 89, թերթ 61ա: Կախեթիի հայերեն արձանագրություններին անդրադարձել է Պ. Մուրադյանը: Տես **Н. М. Мурадян**, Армянская эпиграфика Грузии, Картли и Кахети, Ереван, 1985, с. 157.

[9] ՀԱԱ, գործ 100, Վիճակագրական տվյալներ հայկական գյուղերի, եկեղեցիների եւ բնակչության մասին, թերթ 102ա:

Արխիվային փաստաթղթի այրված լինելու պատճառով այս եւ հաջորդ վիմագրի բնագիրն ամբողջական չէ: Արձանագրությունը վերաբերում է 1737-1743 թթ., քանի որ շինությունը կառուցվել է Ղազար Ջահկեցու կաթողիկոսության տարիներին (1737-1751 թթ.), երբ Ատրպատականի թեմի առաջնորդն էր Զաքարիա վարդապետ Ղափանցին (1735-1743 թթ.): Նա պաշտոնավարել է 9 տարի, ամփոփվել է Ս. Թադեոս վանքում[10]*: Երկրորդ արձանագրությունը եղել է եկեղեցու զանգակատան վրա.*

4. Շինուած գաւիթս ի յիշատակ ծնողաց Շուշ... քաղաքացի Աղաղաբի *(միգուցե՝ Աղարարի)* եւ Գրիգորի Խաչատրեանցի 1 մայիսի...[11]:

Մ. Սմբատյանցի ձեռագրերում կան հարյուրավոր վիմագրեր պատմական Աղվանքից: Դեռեւս Շամախու թեմի առաջնորդ լինելու տարիներին (1887-1894 թթ.) նրա ուշադրությունից չեն վրիպել երկրամասի հայկական հուշարձանները, որոնց մեծ մասն անհասանելի էր արդեն Ի. դարի 80-ական թթ.: Դժբախտաբար, թերի են ուսումնասիրված Բաքվի հայկական հուշարձանները: Սմբատյանցը ոչ միայն գրառել է այդ կոթողների վիմագրերը, այլեւ մասնակցություն է ունեցել քաղաքի մի քանի կառույցների հիմնադրմանը: Նրա գրչին է պատկանում «Ստորագրութիւն վանօրէից եւ քաղաքաց Բագուայ նահանգի» ձեռագիր ուսումնասիրությունը, որում նա այբբենական կարգով տալիս է Բաքվի նահանգի քաղաքների եւ գյուղերի անունների ցանկերը[12]*: Ուսումնասիրությունը մեզ չի հասել, այն պատրաստ է եղել տպագրության, սակայն ինչ-ինչ պատճառներով դա չի իրականացվել: Հեղինակի արխիվում անտիպ վիմագրեր կան Վասպուրական նահանգի Գողթն եւ Նախճավան, Սյունյաց Երնջակ եւ Ճահուկ գավառներից, որոնք հարուստ են եղել պատմաճարտարապետական հուշարձաններով ու վիմագրերով:*

Ագուլիս քաղաքն ունեցել է երկու կամուրջ, որոնցից մեկի հյուսիսային ճակատին եղել է.

5. Յիշատակ է կամուրջս Բարխուդարեանց Մուրադ խանի որդի Պօղոսին, թվ. ՌՃԿ (1711)[13]:

Կամուրջի արեւելյան կողմում փորագրված եւ կիսատ վերծանված արձանագրության մեջ հիշատակվում են նրանց անունները, ովքեր միջոցներ են տրամադրել շինարարությանը.

---

[10] Ա. Հախնազարյան, Արտագի նրեր վանքերը, Երեւան, 2012, էջ 92:
[11] ՀԱԱ, գործ 100, թերթ 102ա:
[12] ՀԱԱ, գործ 119, Բաքվի նահանգի բաղաքների եւ վանքերի հատուկ անունների ցանկ:
[13] ՀԱԱ, գործ 17, Գողթան գավառ. պատմական ակնարկ, թերթ 121ա:

6. Աղէն տվեց Ժ թուման....Հարան տվեց Գ ոսկի...[14]:

Նախիջեւանի Դուկլի-Դիզա պարսկաբնակ գյուղի տարածքում է գտնվել Ս. Ստեփանոս եկեղեցին, որի բեմի խաչքարին եղել է հիշատակագրային արձանագրություն, ըստ որի՝ սահմանվել են Ցղնայի վանքի կալվածքների սահմանները: Վանքը ոչ միայն խոշոր հողատեր-կալվածատեր էր, այլեւ եղել է գրչության կենտրոն:

7. Թվին ՌԵ (1556) յիշատակ է Խաչս ՍԲ Ստեփաննոսի վանքի Պետրոս առաջնորդի ժամանակին Ցղնու վանքի մլքերուն հատերն սահմանքն[15]:

Նույն եկեղեցու մեկ այլ խաչքարին՝

8. ՉՁ (1331)[16]:

Նորակերտ կամ Նորագյուտ գյուղի եկեղեցու բեմի խաչքարի չինարարական արձանագրությունն է.

9. Շինեցաւ ՍԲ եկեղեցիս ի թվին ՌՃԾԱ (1702) ի կաթողիկոսութեան ՏՌՆ Յակոբայ, յառաջնորդութեան Եռայի վարդապետին, գեղիս քահանայ ՏՐ Ներսէսի, մալիք Ղազար, երեսփոխան Կարապէտ Մաթեոս[17]:

Ստորեւ Մեսրոպ Սմբատյանցի արխիվից ներկայացնում ենք հինգ անտիպ վիմագրեր Ջուղայից, որոնք անհետ կորել են 1960-ական թվականներին:

Ջուղայի Ս. Գեւորգ եկեղեցու բեմի ճակատին ագուցված խաչքարին եղել է.

10. Թվին ՌԾԳ (1604) Սուրբ խաչս բարեխաւս առ Քրիստոս Խաւջայ Խաչիկին եւ կողակիցն Մարիամին եւ որդոյ պարոն Սինանին[18]:

Եկեղեցու մարմարե ավազանին.

11. ՍԲ աւազանս յիշատակ է Մխիթարի որդի Ովանէսին ՛ի յարկս ՍԲՑ Գէորգայ զօրավարին ՛ի թվին ՌՃԼՁ (1687)[19]:

Քաղաքի Ս. Ամենափրկիչ եկեղեցին հիմնահատակ ավերվել է 1998 թ., այն ունեցել է շրջապարիսպ, որի մուտքի խաչքարի արձանագրության մեջ բացակայում են բոլոր ձայնավորները. դա հաճախ ենք հանդիպում Ջուղայի վիմագրերում.

---

[14] Նույն տեղում:
[15] ՀԱԱ, գործ 47, Պատմական տեղեկանք Գողթան գաւառի մասին, թերթ 60:
[16] Նույն տեղում:
[17] ՀԱԱ, գործ 47, թերթ 1ա:
[18] ՀԱԱ, գործ 37, Տեղեկություններ Երնջակ գավառի եւ Ջուղայի մասին, թերթ 21բ:
[19] Նույն տեղում:

12 Խաչս յիշատակ խաւջայ պարոն Ազիզ փաշին, Աղաբաբին. Սահակ ուստա, Ամիրբաբայ, Միրզայ, Միրաք, Մէլիքջան Աղաբէկի, թվ ՌԾԳ- (1604)[20]:

Իսկ եկեղեցու մուտքի բարավորի փոքր խաչքարի ստորին մասում եղել է.

13. ՌԽԶ (1597)[21]:

Եկեղեցու դռան ձախ կողմում ագուցված խաչքարին էլ.

14. Ի թվ. ՉԻ (1271) կանգնեցաւ Խաչս 'ի բարեխաւս իշխանութեան պարոն Վահրամայ եւ զաւակի իրոյ Թիւրքմանին եւ այլ ազգականացն[22]:

Հարկ ենք համարում նշել նաեւ Երուսաղեմի հայկական հուշարձանների վիմագրերի մասին: Կյանքի վերջին ամիսներն ապրելով Երուսաղեմում՝ Մ. Սմբատյանցը Ամենայն Հայոց Մատթեոս Բ. Կաթողիկոսին (19-08-1910) պարբերաբար ուղարկել է նամակներ, որտեղ պահպանվել են մի քանի չինարարական բովանդակությամբ վիմագրեր: Դրանք են. Ս. Ստեփանոս եկեղեցու դռան մարմարե ճակատաքարի վրա.

15. Մարմարիոն շրջապատս դրան շինեցաւ արդեամբ Արզմանին բարեսէր Արզմուն աղայի ի յիշատակ բոլոր զարմից իւրոյ ի պատրիարքութեան Տեառն Ստեփաննոսի արքեպիսկոպոսի Հայոց ՌՄՁԵ (1836)[23]:

Իսկ Ս. Նշան եկեղեցու պատին (չի նշում որ պատին).

16. Օծմամբ արբեցելով հաստատեցաւ եկեղեցիս յանուն սուրբ Նշանի Փրկչին, ի յիշատակ նախահաւատ ազգիս Հայոց, բարիշան տենչանօք սրբոյ գահին Երուսաղեմի Տ. Տ. Յովհաննու վեհափառ պատրիարքի Զմիւռնացւոյ *(Երուսաղեմի պատրիարք է եղել 1850-60թթ.)*, ի մատուցումն պաշտաման սրբոյն խորհրդոյ ի փառս ամենասուրբ Երրորդութիւն գնեալ արդեամբ Յովսեփ սարկավագի Անթապցւոյ միաբանի սրբոյ աթոռոյն Երուսաղեմի. յամի տեառն 1851 ի փետ. 28[24]:

Այս եկեղեցին վերանորոգվել է 1910թ.

17. Վերանորոգեցաւ ՍԲ եկեղեցիս արդեամբ տեղաբնակ բարեսէր ազգայնոց ի յիշատակ ննջեցելոց իւրոց 1910 ամի 17 ապրիլի[25]:

---

[20] ՀԱԱ, գործ 37, թերթ 25ա: Ս. Սաղումյան, Վ. Հարությունյան, Վիմագրեր հին Ջուղայից, ԼՀԳ, 1983, թ. 12, էջ 44:
[21] ՀԱԱ, գործ 37, թերթ 25ա:
[22] Նույն տեղում:
[23] ՀԱԱ, գործ 151, Մ. Սմբատյանի նամակները Ամենայն Հայոց Կաթողիկոսին, թերթ 3ա:
[24] ՀԱԱ, գործ 151, թերթ 4ա:
[25] Նույն տեղում:

Մ. Սմբատյանցի արխիվում հինգ տասնյակ անտիպ վիմագրեր կան Վայոց ձորից, Օշականից եւ Հայաստանի տարբեր շրջաններից։ Սակայն առավել կարեւոր են Հայաստանի Հանրապետության սահմաններից դուրս գտնվող վիմագրերը, որոնց թիվն աստիճանաբար նվազում է:

Մեսրոպ արքեպիսկոպոս Սմբատյանցի հավաքչական աշխատանքների արդյունքում մեզ չեն հասել մոտ երկու հարյուր հիսուն վիմագրեր (հրատարակված եւ անտիպ), այդ թվում՝ պատմական Ճահուկ գավառից՝ 11, Երնջակից՝ 78, Գողթնից՝ 39, Նախիջեւանից՝ 8, Ջուղա քաղաքից՝ 5, Ագուլիսից՝ 43, Աղվանքից՝ 47, հարակից այլ երկրներից՝ մոտ 20:

Մ. Սմբատյանցը թողել է վիմագրագիտական հարուստ ժառանգություն: Նրա՝ արդյունավետ եւ մեծ աշխատանք պահանջող գործունեության արդյունքն են արխիվային նյութերը, որոնք, լիահույս ենք, որ մի օր կհրատարակվեն եւ նոր կյանք կստանան ուսումնասիրողների կողմից, ինչի արդյունքում անվանի հոգեւորականի գիտական վաստակն ու գործունեությունն ըստ արժանվույն կգնահատեն սերունդները:

РЕЗЮМЕ

В результате работ армянских ученых XIX в., занимавшихся собиранием и исследованием эпиграфических надписей, до нас дошли несколько тысяч таких надписей, многие из которых впоследствии были утеряны по известным причинам. М. Смбатъянц исследовал более чем 700 надписей, из которых ок. 300 не сохранились (в том числе 80 - из территории современной Армении, 185 - из Нахиджевана, 47 - из разных районов Азербайджана и более 20 из других сопредельных стран). Однако в личном архиве М. Смбатъянца сохранились копии 17 из них, которые издаются впервые в этой статье.

SUMMARY

Thanks to the collecting works of Armenian scholars of the 19th century, a few thousand epigraphical inscriptions reached us, and many of them were lost because of known reasons. About 700 inscriptions by M. Smbatiants reached us, ca. 300 of which have been lost (80 of them are from Armenia, 185 - from Nakhichevan, 47 - from various regions of Azerbaijan and ca. 20 - from other neighboring countries). However, copies of 17 inscriptions have been preserved in the personal archive of M. Smbatiants, which are published in this article for the first time.